Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ «ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԱՎԱՆԻ ԳԱՌՆԻԿ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

Առարկա՝ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Թեմա՝ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԵՐԻՆ

Վերապատրաստող, մենթոր՝ ԿԱՐԻՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ուսուցիչ՝ ԳԵՂԵՑԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Երևան 2022

Բովանդակություն

Ներածություն…… 3

Գրական ակնարկ ……... 5

Հետազոտության ընթացք ……. 7

Եզրակացություն …… 13

Օգտագործված գրականություն ……. 14

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կրթությունը գիտելիքների քանակը չէ,
այլ լիակատար ըմբռնումն ու հմուտ
կիրառումն այն ամենի, ինչ գիտես:
ԱԴՈԼՖ ԴԻՍՏԵՐՎԻԳ

21-րդ դարում հանրակրթության ոլորտի առջև ծառացած են բազմաթիվ մարտահրավերներ,որոնք պայմանավորված են ժամանակակից աշխարհում տեղի ունեցող փոփոխությունների, զարգացումների, գիտության և տեխնիկայի նվաճումների, նորարությունների, սովորողների հետաքրքրությունների, նախասիրությունների, նպատակների թելադրանքով: Ներկայումս,երբ երեխան ծնված օրվանից կարծես ակտիվ «շարժման» մեջ է գտնվում,երբ ինֆորմացիայի աղբյուրները անսպառ են, և ցանկացած տեղեկություն կարելի է «մեկ հպումով» գտնել, դասավանդման գործընթացում դիտարկել սովորողին որպես պասիվ գիտելիքը լսող և վերարտադրող այլևս անհնարին է:

Արդյունավետ դասավանդման համար ուսուցչին անհրաժեշտ է ոչ միայն դասավանդվող առարկայի խոր և բազմակողմանի իմացություն, այլև դասավանդման նպատակների, խնդիրների, դրանց կենսագործմանն ուղղված եղանակների, ձևերի ու միջոցների նպատակահարմար ընտրություն կատարելու կարողություն և դրանք գործադրելու հմություն:

Կրթության բովանդակությունը կազմող բաղադրիչներից առաջինը՝ ինչ սովորեցնելը, ծրագրային նյութի միջոցով սովորողներին մատուցվում է իբրև ճանաչողական – իմացական արժեք՝ գիտելիք, երկրորդը՝ ինչու սովորեցնելը, շեշտադրում է ինչ սովորեցնելու նպատակը, իսկ երրորդը՝ ինչպես սովորեցնելը, պայմանավորում է դասավանդման կերպը, եղանակը, միջոցներն ու ձևերը, այն, ինչ կազմում է ուսուցման մեթոդաբանությունը:

Որպեսզի աշակերտի մոտ դրական վերաբերմունք և արժևորման բարձր մակարդակ ձևավորվի՝ կրթության կամ առանձին առարկայի նկատմամբ անհրաժեշտ է, որպեսզի ուսուցիչների դասավանդման մեթոդներն ու մոտեցումները նպաստեն դրան: Արդյո՞ք աշակերտները ակտիվորեն ներգրավված են դասապրոցեսին, թե գտնվում են պասիվ՝ լսողի դիրքում: Որքան ակտիվ է աշակերտը ներգրավված դասապրոցեսին, այնքան ավելի բարձր են նրա ձեռքբերումները: Հետևաբար, նշված փաստերը հաշվի առնելով՝ ուսուցչակենտրոն դասավանդման մոդելից անցում է կատարվում սովորողակենտրոն դասավանդմանը: Ուսուցչի արդյունավետ գործունեությունը ենթադրում է դասարանում նպաստավոր միջավայրի ստեղծում, նպատակների հստակ սահմանում և ուղղորդում: Շատ կարևոր է նաև ուսուցչի սկզբունքային դիրքորոշումը սովորողների սովորելու կարողությունների նկատմամբ: Ուսուցիչը պետք է հավատա և հավատացնի սովորողին, որ նա կարող է սովորել և լավ արդյունքներ գրանցել: Օգնելով նրանց ճանաչելու սեփական ուժեղ և թույլ կողմերը, գնահատելու արտաքին միջավայրում առկա հնարավորություններն ու վտանգները՝ կկարողանանք սովորեցնել, թե ինչպես կարելի է ուժեղ կողմերն ու հնարավորություններն օգտագործելով՝ ժամանակի ընթացքում վերացնել թույլ կողմերը և զերծ մնալ սխալներից:

ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

«Միայն այն ուսուցիչն է իր գործում հմուտ, ով լավ գիտի, թե ինչ պետք է իմանան իր աշակերտները և ինչ ճանապարհով է պետք հասնել այդ գիտելիքներին» :

Վ. Ա Սուխոմլինսկի

Կրթության բովանդակության հիմքում ընկած է այն մոտեցումը, որի համաձայն ուսումնական գործընթացը պետք է իրականացնել այնպես, որ ուսումնառության ընթացքում սովորողը ոչ միայն ձեռք բերի գիտելիքներ, այլև կարողանա դրաք կիրառել առօրյա կյանքում, տարբեր իրավիճակներում արագ կողմնորոշվի, հանդիպած խնդիրներից ելքեր ու լուծումներ գտնի: Ուսումնառության ընթացքում նշված կարողությունները կարող են ձևավորվել ու զարգանալ ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի, տեխնոլոգիաների, մեթոդների ու հնարների կիրառման արդյունքում:

«Մեթոդը» հունարենից փոխառված բառ է, որ ընդհանուր առմամբ նշանակում է «որևէ նպատակին հասնելու, խնդիր լուծելու եղանակ», իսկ բառացի թարգմանությամբ՝ «ինչ-որ տեղ տանող ճանապարհ»:Մեթոդի հասկացության բառիմաստային պարզաբանումները, սահմանումները բազմաթիվ են: Այնուհանդերձ, դրանք գրեթե բոլորն ունեն մեկ ընդհանրություն. մեթոդն ուսուցչի և աշակերտի համագործակցության ձև է, որը միտված է ուսումնական նպատակների իրականացմանը[1]:

---

[1] Алехин А.Ю. Общие методы обучения в школе 1983

Ցանկացած թեմայի ուսումնասիրություն կարելի է կազմակերպել ամենատարբեր մեթոդներով, սակայն շատ կարևոր է ճիշտ և նպատակահարմար ընտրությունը:

Ուսուցման մեթոդները պայմանականորեն կազմում են երկու խումբ՝ ավանդական և ժամանակակից կամ ինտերակտիվ:

Ժամանակակից մեթոդների հիմքում ընկած է սովորողի ինքնուրույն ուսումնական գործունեությունը, գիտելիքների ձեռքբերման գործընթացում նրա անմիջական և ակտիվ մասնակցությունը[2]:

Ինտերակտիվ ուսուցումը ուսուցիչների և սովորողների միջև փոխգործակցություն է, որտեղ ուսուցիչները և սովորողները շփվում են միմյանց հետ դասի ժամանակ, և սովորողները այլևս պասիվ ունկնդիրներ չեն, այլ դասի ակտիվ մասնակիցներ: Եթե ավանդական մեթոդի ժամանակ դասի հիմնական գործող անձը ուսուցիչն էր, ապա այստեղ ուսուցիչ-սովորող փոխազդեցությունը հավասար մակարդակի վրա են՝ սուբյեկտ սուբյեկտային փոխհարաբերություններ:

ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՄԵԹՈԴՆԵՐ



ԱՎԱՆԴԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ



[2] Ս. Սարուխանյան, Մ. Միրումյան, Ն. Դիշաղաջյան, Փուլային ուսուցման եղանակ, Երևան,2014:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔ

Մշտապես ուշադրության կենտրոնում պահելով այն հանգամանքը, թե ինչպես կարող ենք մոտիվացնել սովորողներին, խթանել նրանց հետաքրքրությունը գրականության դասերի հանդեպ՝ որոշեցի հետազոտություն անցկացնել՝ ուսումնասիրելով, թե ժամանակակից մեթոդները որքանով են արդյունավետ դարձնում առարկայի դասավանդումը:

Որոշեցի հետազոտության առարկա դարձնել խմբային աշխատանքի մեթոդը՝ նպատակ ունենալով մանրամասնորեն վեր հանել մեթոդի արդյունավետությունը գրականության դասավանդման գործընթացում:

Հետազոտությունս իրականացրել եմ տարբեր տարիքային խմբերի հետ՝ ընտրելով XI, IX, V դասարանները:

Դասարանները, որոնք ընտրել եմ, սովորում են ուսումնառության տարբեր մակարդակներում գտնվող աշակերտներ: Կան աշակերտներ, որոնք բավական ակտիվ մասնակցություն ունեն դասին, արագ են ընկալում նոր նյութը, կարողանում են ինքնուրույն իրականացնել ուսումնառությունը: Նրանց կողքին կան նաև պասիվ աշակերտներ, որոնք չեն ցանկանում մասնակցել դասին, աննկատ են մնում, ջանք չեն գործադրում ավելին անելու համար, առարկան յուրացնելը իրենց ունակություններից վեր են համարում: Իմ նպատակն է խմբային աշխատանքի միջոցով մոտիվացնել աշակերտներին, խթանել նրանց մասնակցությունը դասին:

XI դասարանում խմբային աշխատանքի մեթոդով ներկայացվեց «Ավետիք Իսահակյանի կյանքը և ստեղծագործության ընդհանուր բնութագիրը» թեման: Նախապես ձևավորված խմբերից մեկին հանձնարարված էր եղել հետազոտել, ուսումնասիրել և ներկայացնել մեծանուն գրողի կյանքը, կյանքի կարևոր ու

առանցքային դեմքերն ու դեպքերը: Մյուս խումբը պետք է ներկայացներ Իսահակյանի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը: Դասի ժամանակ խմբերը ներկայացրեցին իրենց հետազոտությունների արդյունքները: Նրանք ոչ միայն պատմեցին, այլև տեսաֆիլմ

ցուցադրեցին նրա մեծ սիրո՝ Շուշանիկ Մատակյանի, վարպետի սիրելի իրերի, նախընտրած ուտեստների,Նեմեսիս ծրագրում նրա մասնակցության և դերի մասին և այլն:Սովորողները պատրաստել էին նաև պաստառներ և նկարներ: Խմբերի ներկայացումից հետո ծավալվեց հետաքրքիր զրույց-քննարկում, որին աշակերտներն անկաշկանդորեն արտահայտեցին իրենց կարծիքներն ու մտքերը:Սովորողները խոստովանեցին, որ պատրաստվել են մեծ ոգևորությամբ և սիրով, ինքնուրույն հետազոտություն անելը հետաքրքիր էր և արդյունավետ:Նրանք փաստեցին, որ իրենց փնտրած և գտած տեղեկությունները այլևս երբեք չեն մոռանա:

IX դասարանում խմբային աշխատանքը իրականացրեցի Էդուարդ դը Բոնոյի Մտածողության 6 գլխարկներ մեթոդով: Թեման «Արա Գեղեցիկ և Շամիրամ» առասպելի ամփոփումն էր: Խմբերը ներկայացրեցին առասպելն

ըստ մեթոդի ներկայացված պահանջների: Սպիտակ գլխարկները ներկայացրին փաստեր, տեղեկություններ առասպելի, հերոսների մասին:Կարմիր գլխարկների խումբը ներկայացրեց առասպելի հուզական կողմը:Սև գլխարկների խումբը

բարձրացրեց հոռետեսական մտքերը: Դեղին գլխարկները խոսեցին առասպելի դրական կողմերի մասին:Կանաչ գլխարկները ստեղծարարներն էին, նրանք առաջարկեցին առասպելի ավարտի իրենց տարբերակը:Ամփոփումը կատարեց կապույտ գլխարկների խումբը՝ նշելով խմբերի աշխատանքների առավելություններն ու թերությունները:

Մեթոդը մեծ ոգևորություն էր առաջ բերել հատկապես սովորողների շրջանում:Նրանք նշում էին, որ այս մեթոդնը նպաստել է խորքային վերլուծություններ անելու և թեման ամբողջականորեն յուրացնելու, իսկ խմբերով աշխատելն առավել հետաքրքիր ու դյուրին է դարձրել իրենց ուսումնառության գործընթացը: Հաջողված դաս էր:

V դասարանում քննվող թեման աշնանը և գարնանը նվիրված ստեղծագործությունների ամփոփումն է: Դասարանի աղջիկները ներկայացնելու էին գարունը՝ իրենց համար ընտրելով «Գարնան 8 ծաղիկներ» անունը, իսկ տղաները գովերգելու էին աշունը՝ ընտրելով իրենց համար «Ոսկեհանդերձ աշուն» անունը:

Երեխաներն ուսումնասիրել, առանձնացրել էին համապատասխան եղանակի

առանձնահատկությունները, առավելությունները, տարբերությունները, գույները, բարիքները: Նրանք իրենց պատկերացումները ներկայացրել էին պաստառների տեսքով: Տղաներն աշնան հարուստ այգիներից անուշահամ մրգեր էին բերել, իսկ աղջիկները՝ գարնանաբույր ծաղիկներ: Աղջիկները գարուն գլխատառով խաչբառ առաջարկեցին տղաների համար, իսկ վերջիններս գեղեցիկ երգ նվիրեցին աղջիկներին: Երկու խմբերն էլ ասմունքեցին թե՛ մեծանուն գրողների բանաստեղծություններից, թե՛ իրենց հեղինակած խոսքերից ու շարադրություններից: Բոլորն անկաշկանդ ու մեծ ոգևորությամբ իրենց մասնակցությունն էին

ցուցաբերում թիմային աշխատանքը կատարյալ դարձնելու համար: Անչափ հետաքրքիր, արդյունավետ, գունավոր դաս էր:

ԳՆԱՀԱՏՈՒՄ

Երեք դասարաններում էլ հետազոտության ընթացքում սովորողի դրսևորած վերաբերմունքի գնահատումն իրականացրեցի ինքնագնահատման աղյուսակի /ռուբրիկի/ միջոցով (որի հարցերը նախապես քննարկել էի աշակերտների հետ):Հարցերը ընտրվել են՝ ելնելով ես-դու-մենք հնարի սկզբունքներից:

Խմբային աշխատանքի ընթացքում ես...	**Արդյունքներ**		
	Ոչ այնքան լավ	**Լավ**	**Գերազանց**
Մասնակցել եմ տեղեկատվության հավաքմանը:			
Մասնակցել եմ տեղեկատվության մշակմանը:			
Մասնակցել եմ տեղեկատվության ներկայացմանը:			
Ընտրել եմ անհրաժեշտ լուսանկարներ, նկարներ:			
Պատասխանել եմ ինձ ուղղված բոլոր հարցերին:			
Ուշադիր լսել եմ ընկերներիս ներկայացումները:			
Քննարկումների ժամանակ արտահայտել եմ իմ կարծիքը:			
Հաղթահարել եմ դժվարությունները:			
Արդյոք հետաքրքիր են նման մոդելի դասերը:			

Ռուբրիկի վերջին հարցի պատասխաններն ամփոփելով՝ ունենք հետևյալ պատկերը.



Սովորողների ինքնաբավ ոգևորությունը, հարցումների արդյունքները ապացուցում էին, որ ուսումնառությունը հաջողված է, թեմաները լիարժեք յուրացված, այսինքն՝ ուսուցման ընտրված մեթոդներն ու մոտեցումները արդյունավետ էին, ճիշտ և հաջողված:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով կատարածս հետազոտությունը, ի մի բերելով երկարամյա աշխատանքային փորձս՝ վստահաբար կարող եմ նշել, որ ժամանակակից սովորողին ուսուցման գործընթացում ներառելու, ուսուցման գործընթացը արդյունավետ ու հաջողված կազմակերպելու համար կարևոր պայմաններից մեկը պասիվ ուսումնառուի փոխարեն ակտիվ, ներգրավված, ինքնուրույն սովորող դաստիարակելն է: Այդ գործընթացում չափազանց կարևոր ու անառարկելի են ինտերակտիվ մեթոդների դերը:

Կարող ենք փաստել, որ ժամանակակից մեթոդները մեծապես նպաստում են սովորողների մոտ ինքնուրույնության, համագործակցության, ստեղծարարության, փոխադարձ հարգանքի, մեկը մյուսին լսելու, այլոց կարծիքները հաշվի առնելու, սեփական մտքերն անկաշկանդ ներկայացնելու հմտությունների, սովորել սովորելու, թվային և մեդիա, ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակությունների ձևավորմանը, քննադատական մտածողության զարգացմանը:

Անհերքելի է այն փաստը, որ ժամանակակից մեթոդները հիրավի նպաստում են ուսումնական գործընթացի արդյունավետությանը: Ներկայումս ժամանակակից մեթոդների այնքան լայն ընտրություն ունեն ուսուցիչները, որոնք կնպաստեն սովորողների մեջ հետաքրքրությունների բարձրացմանը, մոտիվացիային, ինչն էլ հնարավորություն կտա ձևավորել գիտելիքներով, հմտություններով հարուստ, սեփական արժեքային համակարգն ու վերաբերմունքն ունեցող մարդ և քաղաքացի:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ս. Խաչատրյան, Ուսուցման արդյունավետ հնարներ , Երևան, 2020
2. Հ. Այվազյան, Դասի կառուցվածքային տարրերի կիրառումը հանրակրթական առարկաների օրվա պլանների կազմման գործընթացում, Երևան, 2014
3. Ս. Սարուխանյան, Մ. Միրումյան, Ն. Դիշաղաջյան, Փուլային ուսուցման եղանակ, Երևան, 2014
4. Алехин А.Ю. Общие методы обучения в школе ,1983